

եկեղեցի, եւ հոն պսակի արարողութենէն վերջ,
փեսային հետ պիտի երթայ, ոչ եւս իր մօրը,
այլ իր երկանը տունը, այս ճամբորդութեան
անարդիւն ինամիները կ'երգեն յանուն փե-
սային.

Ման եկուր, աղուհր ման եկուր,
Գեւայ ի մեր դռնն ի գան եկուր.
Հեւ շես ի գար մեր բանէ.
Թուիս աշուիտ հոգիս կո հանէ:
Հայ իմ հայ, անմահ աղուհր,
Զի կայ քեզի նման աղուհր:

Խնամիները բաժնուելէ առաջ հարսին ու
մօրը զուարթութիւն բերելու համար կ'երգեն
հետեւեալը, աղէկանը բերեն.

Մի լար, մարիկ, մի լար,
Ես նորէն տի գամ.
Ըսկի տանը հինկ օր
Արկով տի գամ:

Ու մայրը տելի կ'արտասուէ:

(Ըր-ը-ը-ը-ը-ը-ը)

Մ. Ս. ԳՐԻՐՈՒԼԻՆԻ



ՔՂԱՎՏՈՒԹԻՒՆ

ԿՈՉ ԳՐԱԳԵՏՆԵՐԻՆ

Պատմական վէպը, մանաւանդ երբ նորա
ամեն մի գիծը վերցուած է ինուսմ վաւերական
աղբիւրներից, ինչպէս Մեծանուն Բաթթու «Սա-
մուէն» է, ոչ միայն ինչպէս վէպ է կարդաց-
ւում, այլ՝ լսելու է գեղարուեստական շա-
րով զարգարուած՝ Գուրու-Բիշն: Որով հասարակ
ընթերցողն աւելի մօտ է կանգնում նախնաց
անցուած ճգնաժամերին, լաւ ու վատ սրբին,
ճաշկուսմ այն դառնութեան բաժակից, որից
դարեր առաջ ըմպել են մեր հայրերը:
Եւ ինք զինք հանդիսատես է կարծում նկա-
րագրուած շքանի հակայական թատերաբեմին:

Իմ մի քանի նախափորձերը՝ պատմական
կեանքից լոյս ընծայած փոքրիկ պատկերները,
տրամագրել էին արդեն մի լուրջ գործի ձեւ-
նարկութեան: Հետզհետէ իմ գէմ ելած բազ-
մաթիւ յիշատակարաններ, արձանագրութիւն-
ներ, աւանդութիւններ, որ պատմական փոփո-
վարագոյրն են պատահում, յայտնագործելով

անակնկալ իրողութիւններ, ինչպէս հարկ ան-
հրաժեշտ ծանրացան իմ մաքի ու արտի վրայ:
Եւ ես 1899 թուից կազմեցի՝ «Երևի» խո-
րագրով պատմական վէպի ուրուագիծը: Թեեւ
գործն ստուար՝ ըստ որակի եւ ըստ քանակի,
կարօտ տարիների աշխատութեան, կարօտ իրա-
զեկ գրողների աջակցութեան, կարօտ, որ էա-
կանն է՝ նիւթականի, այլու ամենայնիւ ան-
յողողիչ ձեռնարկների գործի, ժողովելով մե-
ծաքանակ նիւթեր պատմական, նկարագրական
ազգագրական եւայլն: Թէ ինչպէս սեփական
իշխանութեան անկումից, ձիւնիկ-խանի, Թա-
մարլանի աւերումներից, բարձր Հայք եւ շատ
գաւառներ Օսմանեան իշխանութեան ներքոյ
ստրկանալուց յետոյ, իսպառ ոչնչացաւ ռազ-
միկ-Հայաստանը, ընկան բերդեր, ամրոցներ,
ընկան անհետացան նախարարական տոհմերու
պայազատները, ընկաւ գրականութիւնն ու նորա
կրտսեր քոյր ազգային գեղարուեստը, լեցցին.
— եթէ կարելի է այսպէս անուանել, — գիտ-
նական քարոզները, տգիտութեան համատարած
խաւարի մէջ ծնունդ առնացան «ներքուստ»
եղբայրասպան կոիւններ, արտաբուստ՝ մահ-
մէտական կուռոզ ազգերից, աւար-աւեր . . .

XVI—XVII-դ. դարերն ենք ասում, մի
մահահոտ շքան՝ Եւուզ-Վէլիմ, Գանունի Սու-
լէյման սուլթանների, միւս կողմից՝ Իսմայիլ,
Թահմաշ եւ Ապաս-Շահերի կուռի ու աւեւ-
րածութեան եղբրավայր Հայաստանն ընկած
նոցա տնաքանդ սրի եւ անտանելի մահանի ծան-
րութեան տակ՝ Հայն հոգեվաթի թուլներ էր
այնկացնում, իսկ Օսմանեան յօրհոտ վեհա-
պետները դէպի փառաց գազաթնակէտ վերե-
լակում . . .

Ենք պատկերացնելու ենք մի եղբրական
շքան, վէպի մէջ ի հանդէս պիտի գան ոչ
միայն զոյգ մահմտական արքունիքներն իրենց
բոլոր կողմերով՝ վերջրած հաւատարիմ աղ-
բիւրներից, այլ՝ բոլոր ծննդ, ծննդած խաւերն
իրենց զատկարգներով, բոլոր հանդէսներն ու
ծէսերը, տարազներն ու նիստ ու կացերը, մի
խօսքով՝ որպէս հնարաւոր է իսկական պատկերը:
Դեւ եւս պատմութեան սեփականութիւն չը
գարձած Հայ, Վրացի մարտիկների օրհասական
վարկածները ցուցադրելով՝ հայրենի շինու-
թիւն օճաղը, որի առկայեցաւ անթեղից ի վեր-
ջոյ հրդեհեցաւ Ղարաբաղը, ոտքի ելաւ Զէյ-
թունը, շարժուեց Սասունը, բայց թշնամիներ
ամենաբուլ ծփանքից յաղթական կանգնեցաւ
միայն Սիսական աշխարհը:

Այսպիսի մի պատմական խոշոր գործի համար գեղ շատ քիչ են իմ հաւաքած նիւթերն ու մի քանի տասնեակ աղբիւրները, այս կողով ձեռնհաս գրագէտներին դիմելով, խնդրում եմ աջակցել, ինձ հասուցանել այդ դարերից ծագած աւանդութիւններ, պատմական հատուածներ, յիշատակարաններ եւ այլն, որոց մասին յիշուած են ստորեւ:

ա. Անհրաժեշտ են մատուորապէս 120 (1530—1650) տարուայ անցքերից պատմական հատուածներ, յիշատակարաններ, աւանդութիւններ, երգեր կամ ոտանաւորներ, ազգագրական տեղեկութիւններ, նոյն իսկ Հայաշուկների թուրքերէն լեզուով երգած Դաւիթ Բանկեր, Սելիմի, Սուլէյմանի եւ յաջորդող սուլթանների արշաւանքներին վերաբերեալ, որոնցից կարելի է գտնել Տաճարահայաստանում անչափ առատ փնէ կոշուած Հայաստան խաղի գրքերի մէջ: Հատ կարելւոր են այն ժամանակի Հայ, Վրացի, Թուրք, Պարսիկ ընտանեկան կեանքի, սովորութիւնների, ծեսերի, հանդէսների, զգեստների եւ այլ ազգագրական նիւթեր, բոլոր դասակարգերից:

բ. Ճեմալէ-ի, Նէշրի պատմագրի, Հէյն-Պէլէ-ի՝ Մոլլա Իսրայիլ, Թաթլի Ալի Օսման Լիւթիֆի փաշայի, Նոյն անուն պատմութիւն՝ Միւսհիւթեպի ճեմալի, Թաթլի Թաթլի Սատեղտի, Թաթլի Ալի Օսման Հասան-Բէկ-զատի, Սոլաքզատի եւ ինձ անձանթ պատմագրերից քաղել տեղեկութիւններ, եթէ հնարւոր է՝ հատուածներ թարգմանել Սուլթան Սուլէյմանի, Սելիմ Բ.ի, Բիւստէմ վէզիրի, Խիւրրէմ դշուշի՝ որին Փրանսիացիք ազգասիրաբար Ռոքսելյան են անուանում, ծովակալ եւ քանիցս Մեծ վէզիր Խալիլ Հայկազն կեսարացու, չղալիզատէ Սինան (Խորոմթ), Լալա-Մուստաֆա, Ահիւճի Մէհմէտ (Ներքինի) փաշաների եւն Խսկիւտարի ծերունի գուշակ Մահմուտի մասին, որչափ մանրամասն, բազմակողմանի՝ արեւափ լաւ: Լալա-Մուստաֆայի համար մի հայ ձեռագրում առուած է Ալ-Բի, միւսգիտ խաթի կամ պատկերի է կարծուում, պարզել այս կէտը, կան այդպէս պատմագրեր եւ որոնք են:

գ. Սելիմ Բ.-ին ոմանք, ինչպէս Ա. Գաւրիսեանի Հրէ-Բի են անուանում, ինչ են առում այս մասին Թուրք մատենագիրքը: Ցանկալի է շատ՝ պարզել Բեք Տրեւհու ծագումը, պատմութիւնը, որ այնքան մեծ դեր խաղաց արքունիքում: Սելիմ Բ.-ի մանկութեան

շրջի ընկեր, Հրէայ Իս-Բի-ի, որ յետոյ կարգուեցաւ Ալ-Բի-ի Գեւ-ի եւ Արեւիկազոսի էլի-ի, Դաւիթ եւ Բեք միւսնոյն ընտանիքից չեն, արդեօք Սելիմի ծագման առեղծուածը ծագուած է՞ Նորանց մէջ, Առաիկ Գաթալիէ իրադրութեան մօտ չէ՞, նա չէ՞ բաց պահած Իս-Բի խիւրրէմ դշուշի եւ Բիւստէմ մեծ վէզիրի խոշոր գեղունակներից միսի յիշատակը: Գ. Սուլթան Սուլէյմանի արհամարհանքով լի հրովարտան աւ Գերգինանդ թաւաւոր Մաճառացի, եղբայր Կարաւ Ե. Կայսեր, սկզբից ցվերջ՝ իւր տիրոջններով թարգմանել, որ եթէ չեմ սխալուում՝ Արիկեան Էֆենտիի դասագրքերից միսի՝ Գե-Լի-Բի կամ Գե-Բի-ի մէջ եւս կայ:

ե. Այս արեւմտ շրջանում Հայերի կրած տառապանքի, յայտնի գործող տիպերի, ինչպէս է Մուշտի վարդապետը, որ յանգրդեցաւ Սուլթան Սուլէյմանի ներկայանալ եւ դադարեցնել մանկածողութիւնը:

զ. Վրաց կեանքից եւ պատմութիւնից համանման նիւթեր, մանաւանդ գերեվաճառութեան մասին մանրամասնութիւններ եւ ազգային կեանքից այդ շրջանում՝ սկսած Սինա թաւաւորից:

է. Պարսից կեանքից եւ պատմութեան մէջ որոնել Հայազգի Բէկաշ-Խան, Բաղդատի քաջ կուսակալը, որ 1638 թ. Մուրատ Գ.-ի դէմ խիզախեցաւ եւ մեծապէս յարգուեցաւ յաջութեան Սուլթանից: Միրան-Խան, որ ծառայում էր Թահմազ-Շահին ինչպէս պալատական իշխան եւ մի քանի ուրացող Հայ, Վրացի քրիստոնեայ խաներ, որոց մասին մեր աղբիւրների մէջ մի առ մի չէ յիշուած: Սրանց կեանքի եւ գործերի մասին՝ հնարաւոր եղածի չափ բազմակողմանի տեղեկութիւններ:

ը. Տայոց ամուսններից Թաթլի, Թաթլի կամ Թաթլի քաղաքի անցեալից: Թէ ինչպէս աւերուեցաւ նա XVI-դ դարի վերջերին՝ կամ յաջորդի սկզբներին, թէ ուր գերի վարեցաւ բնակչութիւնը: Ցեղացի քրդերի պատմութիւն՝ Հաս-Ապպանէ Եւսեբի ու ժողովուրդը Պարսկաստան տարին: Այս պատմութեան ստուգութիւնը կարող են լսել պարսկահայերը մեծերից, անշուշտ եթէ կան թուրքիկցիների շատախոսներից՝ լսած կը լինեն քաղաքի աւերման, գերիվարութեան եւ այլ անցքերի մասին:

թ. Արամունդ կամ Արտանուճ բերդի անկումը, Սահաթաբեգ Բազադատունի վերջին իշխանների ժողովրդիկոտորածը: Այդ ամբողջ մասին

ոչ միայն պատմական և անդամաների թեր, այլև՝ բերդի, քաղաքի, Ղարա-Ջահանմ վճի նշն իսկ լուսանկարները՝

Ժ. Հաւելթ-իմերեւելի Սաթլեւ քաղաքի եւ բերդի վերջին իշխաններից Յովսափաթ Սաթլեւ Բեգ-Բագրատունու կնանքից եւ այն 93 Հայ, Վրացի բերդատեր իշխանների, որ 1554 թ. Սուլէյմանից հրապարակեցան Սերաստիա, Աշխարի Դաշտում բռնադատուեցան ուրանալ, որով վերացուեցան հին սոսնձանները։ Սաթլեւի ամբողջ առաջ, մինչեւ այժմ կանգնած մենաւոր խաչարձանի մասին, որի վրայ գրուած է միայն «Յիշդէ», բառը, ստոյգ է, զան է Արտանուշի բերդատեր հերոսուհի դստեր եւ Յովսափաթի հարսնացու «Երանելի» գերեզմանը . . .

Ժա. Մեր մատնանշած շրջանի ձեռագրերից մարդկանց, կանանց, զինուորականների, թագաւորների՝ առհասարակ ամեն դասակարգի պատկերներ, բերդերի եւ վայրերի լուսանկարներ, նկարագրութիւններ եւ այլն։

Ազում եմ հաւատալ՝ որ իմ կոչն ապարդիւն չը պիտի լինայ, դարող անհատներ պիտի ձեռք կարիառեն մի խաւար շրջան պատկերացնելու՝ տաժանելի, բայց ձայուն գործի։ Չէր կարող վալտեր-Սկոթն իւր «Իւնոսէն» հրապարակ լինել առանց բանիմաց հայրենակիցների աջակցութեան։ Անգրիական ճէտովէն խաւերն հայթայթեցին ու առին նորան սկովտական բանահիւսութիւնից հատուածներ, յիշատակարաններ եւ այլն, այլապէս անկարող էր հսկայ հանձարը լուսագրել Աիշարտն ու Իւնոսէ ասպետը՝ հանգերձ բնիկ սկովտացիների աշխարհային կենքով։ չը պիտի պատահեր այն անթափանց վարագոյրը, որի ետեւ պահուած էր իրողութիւնը։

Խնդրում եմ որ ամեն մի հայկա՛մ հայագէտ սատարէ ըստ իւր ձեռնհասութեան որակի, մանաւանդ մեր վանքերն՝ ուր ամբարուած են ձեռագրերի ստուար ծալքեր, ի նկատի ունենալով, որ հայրենի գրականութեան լաւագոյն մասիները, ոչ նիւթականի եւ ոչ գովեստների ու գովիմայ պատկերի հեռանկարներից շացած, այլ լուսաւորեւ սրուց թելագրուած, սխա՛ծ իորենացի, եփիկ, Փաւստոսներից մինչեւ. ներկայի կրտսեր բողոքներ միմիայն հայրենիքին անվարձ ծառայելու, ներքին զգացման բաւարարութիւն տալու մտորմունքով ու տենչով են ի հանդէս իջնում։

Մեր կոչին արձագանգ տուող գրագէտների մասին՝ անպատճառ պիտի յիշուի գրքի աղբիւրների շարքում, բացի այդ՝ ամեն մի աշխատակցող, նայած ուղարկած նիւթի որակին, ստանալու է

«Երանելի» հատորներից մի մի օրինակ, կամ աւելի չի, թերեւս ուղարկել հետեւեալ հասցեով։

Mr. Archag Matoyan
Karvan-Saray, (Gouv. Elisavétopole.)
V-Agdan
Russie Caucase

Խնդրում եմ բոլոր Հայ-թերթերին ու ամսագրերին, ի սէր հայրենի գրականութեան եւ մի խաւար շրջանի լուսաբանութեան «Հնգէ-Արեւիկէ» արտատպելով ծաւալել իմ կոչը։

ՄՐԱՆՆ



Ա Յ Ե Ն Ի Ա Յ Է

1. ԲԵՐԵՆԱՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Յայտնի է, որ գրաբարի հորմոնները բազմատեսակ են եւ շատ դժուար է որոշ կանոններ աւանդել ուսանողներու՝ գիտնալու համար թէ որ բառը որ հորմոնի տակ կ'երթայ։ Այսպիսի դժուարութիւն կը ներկայացնեն նաեւ ըն վերջով բառերը, որոնց ոմանց սեռականը ու կը լլայ, միւսներունը՝ ի։ Արդ՝ ը վերջավանդով բառերու համար մեր անձնական ճիտողութիւնն հետեւեալ կանոնները հաներ ենք։

1. Երբ ը վերջավանդով բառը եռական է, եւ վերջին սուղ վանքն = ձայնաւոր է կանխած՝ այդպիսիներուն սեռականը միշտ ու է. օր. գազամն, արեգակն, ամառն, ատամն-ատամն եւ այլն։

2. Նոյն նախընթաց ձայնաւորով երկականներուն սեռականը միշտ ին է. օր. հարսն, հարսին, դառն, գառն, տառն եւ այլն. բացառութիւն կը կազմէ ակն բառը, որուն սեռականը ուն է։

3. Երբ բառը եռական է, եւ սուղ վանքն է կամ է ձայնաւորն է կանխած, բառին սեռականը ու է. օր. բաղդըն, եղեգն-գան եւ այլն։ Բայց նոյն ձայնաւորով երկականներուն ին է. օր. եղն, ձեռն, բեռն-բեռն եւ այլն։ Բացառութիւն կը կազմեն հետեւեալ չորս երկական բառերը՝ երկն, սերմն, ջերմն, գեղմն — գեղման։

4. Այն բառերը, որոնց նախընթաց ձայնաւորը է, —, — կամ օ է, սեռականին մէջ միշտ ու կ'ունենան. օր. սկիզբն, հիմն, բուռն, ձուկն, ողոքն, ողոն, եփովն եւ այլն։ Վերջին ձայնաւորով